ԿԻԼԻԿԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՍԿԵԴՐԱՄ ՊԵՏԱԿԱՆ ԷՐՄԻՏԱԺՈՒՄ

Խ. Ա. ՄՈՒՇԵՂՅԱՆ

Կիլիկիայի հայկական պետականության ոսկյա դրամները հազվագյուտ են։ Ի տարբերություն մինչև օրս հազարներով մեզ հասած արծաթյա ու պղնձյա կիլիկյան դրամների, ոսկյա հայատառ կիլիկյան դրամները հայտնի են միայն մի քանի նմուշներով։ Այդ տեսակետից էլ յուրաքանչյուր նորագյուտ հին հայկական ոսկյա դրամ դրամագիտական որոշակի հետաքրքրություն ունի։

1964 թ. ձմռանը Լենինգրադում մենք ծանոթացանք Պետական էրմիտաժում պահվող հայկական հին ու միջնադարյան դրամների հետ։ Պարզվեց, որ էրմիտաժի դրամագիտության բաժնում, Ռուբինյան թագավորության դրամների շարքում պահվում է մեկ հատ հայատառ ոսկյա դրամ, որի գոյության մասին մինչև օրս ոչ մի տեղեկություն չի հրապարակվել։

Ոսկյա այս դրամը թողարկված է Կիլիկիայի հայկական թագավորության հիմնադիր Լևոն Մեծի (1199—1219) իշխանության տարիներին, հետևյալ պատկերատիպով.

Ա կողմ. կետավոր շրջագծի մեջ պատկերված է թագավորը, հանդիպահայաց, բազմած առյուծազարդ գահին, գլխին պսակ, հագին պատմուճան, ձախ ձեռքով բռնել է շուշանաձև գայիսոն, իսկ աջով՝ խաչ։ Խորագիրը՝ + ԼԵՒՈՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ, եզերքում կետավոր շրջագիծ։

Բ. կողմ. կենտրոնում, կետավոր շրջագծի մեջ երկթևանի խաչ, կանգնեցված երկու առյուծների միջև, որոնք իրար են նայում մեջք-մեջքի տված։ Խորագիրը՝ + ԿԱՐՈՂՈՒԹԲՆ ԱՍՏՈՒԾՈ. այս ամենը, ինչպես առաջին կողմում, եզերքից վերցված է կետավոր շրջագծի մեջ։

Դրամի տրամագիծը 24 մմ է, կշիռը՝ 6,90 գրամ, պահվում է Պետական էրմիտաժի արևելյան դրամների շարքում (№ 5154)։



Դրամի Ա կողմի խորագրում «ԹԱԳԱՒՈՐ» բառի մեջ երկրորդ Ա գիրը ունի Ս ձևը, որի վ. հաջորդ Ի գրի միջև վերևում նշված է մի փոքրիկ կետ։ Բ կողմում «ԱՍՏՈՒԾՈ» բառի մեջ Ո և Ի տառերը ներկայացված են մենագրի ձևով։ Դրամի ընդհանուր պատկերատիպը, գրության ոճը, դրվագման տեխնիկան, ինչպես նաև ոսկու բաղադրությունը, կշիռը, տրամագծային չափը խոսում են նրա վավերականության մասին։

Հայկական ոսկեդրամի էրմիտաժյան այս օրինակը նման է Վենետիկի (Ս. Ղազար)[1] և Վիեննայի[2] Մխիթարյան թանգարանների, ինչպես նաև Փարիզի[3] (Bibliotheque Nationale) ու տիկին Ն. Գափամաճյանի ժողովածուներում պահվող Կիլիկիայի Ռուբինյան հարստության Լևոն Մեծի

---

1 Ղ ևոնդ Մ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 381։

2 Հ. Կ ղ ե մ ե ս, Վ. Սիպիլյան, Դասավորութիւն Ռուբինեան դրամոց, Վիեննա, 1892, էջ 7, պատկեր 3։

3 Զ ա ր ե հ Պ. Պ ո ղ ա ր յ ա ն, Կիլիկեան Հայաստանի դրամները, Վիեննա, 1963, աղյուսակ I, պատկեր 6, էջ 77, 130։

երկաթյուծ տիպի ոսկեդրամներին[4]։ Պրոֆեսոր Զարեհ Պ. Պտուկյանը իր մեծարժեք աշխատության մեջ ներկայացրել է այժմ առկա ընդհանուր թվով տասը հայատառ կիլիկյան ոսկյա դրամներ[5], բացառությամբ էրմիտաժյան օրինակի։ Դրանք վերաբերում են հետևյալ թագավորներին՝

Լևոն Մեծ (1199—1219)	6 հատ
Հեթում Ա (1226—1270)	2 հատ
Կոստանդին Ա (1298—1299) . . .	2 հատ
Ընդամենը	10 հատ

Լևոն Մեծ թագավորի երկաթյուծ ոսկեդրամի՝ մեր նկարագրած էրմիտաժյան (Լենինգրադի) օրինակը արդեն մեկ միավորով գալիս է ավելացնելու պատմական այդ նշխարների թիվը։ Տարաբախտաբար, մենք չկարողացանք իմանալ, թե որտեղից, ե՞րբ և ո՞ւմ միջոցով է այս ոսկեդրամը հասել Ռուսաստան և իր հանգրվանը գտել Պետական էրմիտաժում։

Միակ մարդը, որի խնամքին ու պահպանությանը երկար տարիներ հանձնված է եղել այս ոսկեդրամը, հանդիսացել է էրմիտաժի «Արևելյան երկրների պատմության բաժնի» ավանդապահ Աննա Սուլթան-շահը։ Հատուկ արձանագրությամբ (№ 43) հայատառ այդ ոսկյա դրամը, ոսկյա 16 ուրիշ արևելյան դրամների հետ միասին, որպես էրմիտաժի «Արևելյան բաժնում» անցյալից մնացած և չգրանցված ժառանգություն, պաշտոնապես հանձնվել են նույն հիմնարկի «Դրամագիտության բաժնին» (№ 583/962)[6]։

---

[4] Պրոֆեսոր Զ. Պտուկյանը, լուսանկարի միջոցով ծանոթանալով Լևոն Մեծի երկաթյուծ ոսկեդրամի էրմիտաժյան օրինակի հետ, նամակով մեզ հայտնեց, որ վերջինս ելած է այն կնիքներից, որոնցով դրվագծված են Փարիզի ազգային մատենադարանում, Վիեննայի Մխիթարյան թանգարանում և տկ. Ն. Գափամաճյանի (Փարիզ) ժողովածուներում ներկայումս պահվող Լևոն Մեծի նույնանման (երկաթյուծ) ոսկեդրամները։ Մասնագիտական այս դիտողության համար հայտնում ենք մեր շնորհակալությունը Զ. Պտուկյանին։

[5] Նույն տեղում, էջ 74—83։ Այդ տասը ոսկյա հայկական դրամներից մեկը (Կոստանդին Ա թագավորի ոսկյա դրամի երկրորդ օրինակը) հայտնաբերվեց 1958 թ. Զ. Պ. Պտուկյանի կողմից Կ. Պոլսի թանգարանում։ Դրա մասին նույնպես դրական հիշատակում չի եղել անցյալում։

[6] Հեղինակը իր շնորհակալությունն է հայտնում էրմիտաժի գրամագիտական բաժնի վարիչ պրոֆեսոր Ա. Ա. Բիկովին՝ սույն դրամը հրապարակման տրամադրելու և մասնագիտական խորհուրդների համար։